

# Լեոնիդ Ենգիբարյան

## Աղջնակին, որ թռչել գիտի

Միայն մի վախեցիր: Քեզ երբեք ոչինչ չի պատահի, որովհետեւ դու երկու սիրտ ունես:

Եթե օդում մի վայրկյանով մեկը կանգ առնի, կողքից մյուսը կզարկի:

Դրանցից մեկը մայրդ է տվել քեզ:

Նա կարողացավ դա անել, որովհետեւ տասնինը տարի առաջ կարողացավ սիրել, սիրել . . . Մի ծիծաղիր, սիրելը բարդ է:

Իսկ երկրորդ սիրտդ տվել եմ ես: Պահիր կրծքումդ իմ խենթ սիրտը:

Ու ոչնչից մի վախեցիր:

Նրանք կողք կողքի են, թե մեկը կանգ առնի, մյուսը կզարկի:

Միայն ինձ համար, մի անհանգստացիր, ինձ թեթեւ է քայլել գետնի վրայով, դա հասկանալի է յուրաքանչյուրին:

Իմ սիրտը՝ քո կրծքում:

թ.՝ Ս. Պետրոսյան